



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳԻԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՀՈԳԵՐԱՆԳԻՍ' ՕԴԱՆԱԻԻ ԱՐԿԱԾԻ ԶՈՅԵՐՈՒՆ, ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷԶ

Նախագահութեամբ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու մասնակցութեամբ Թեմիս հոգեւորականաց դասու անդամներու, Երկուշաբթի, 20 Յուլիսի կեսօրէ առաջ ժամը 11ին, Կելստելի Ս. Ղտնուածածին Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան յատուկ պաշտօն՝ անցեալ Չորեքշաբթի օր տեղի ունեցած օդանաւի ծանօթ արկածի զոհերուն համար: Ներկայ էին իրանահայ միութեան, «Զան Թաւրիզ» միութեան Ներկայացուցիչներ եւ աւելի քան 700 հաւատացեալներ:

Արարողութեան ընթացքին խօսք առնելով, Առաջնորդ Սրբազանը ոգեկոչեց յիշատակը անմեղ զոհերուն, կանգ առնելով վաստակին առջել Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներէն Տոք. Լեւոն Դաւթեանի, որ զոհերուն շարքին էր: Ան նկատել տուաւ, որ զոհերուն շարքին էին հայորդիներ, որոնք հայրենիք կ'ուղղուեին առաջին անգամ, տեսնելու Արարատն ու հաղորդակից ըլլալու հայրենիքին, սակայն դժբախտ արկածը խափանեց անոնց այդ առաջադրանքը: Ան իր ու Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Գագիկ Յովհաննիսեանի անունով ցաւակցութեան խօսք ուղղեց զոհերու հարազատներուն, նկատել տալով, որ գլխաւոր հիւպատոսը շուտով պիտի միանայ սգակիր հաւատացեալներուն, Եկեղեցւոյ սրահին մէջ արարողութեան յաջորդելիք հաւաքին:

Արդարեւ, հոգեհանգստեան պաշտօնեն Ետք, Եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեսուրճ: Առաջնորդ Սրբազանը անձամբ ցաւակցութիւն յայտնեց այս ընտանիքներուն, որոնց հարազատները զոհ գացած էին աղետալի արկածին, աղօթելով, որ բարձրեալն Աստուած Ս. Հոգւոյ միսիթարութիւնը շնորհէ սգակիրներուն:

Հոգեհանգստեան այս արարողութիւնը տեղի ունեցաւ Երկուշաբթի օր, որովհետեւ Կիրակի օր մեր Եկեղեցւոյ տաղաւարներէն՝ Վարդավառի տուն էր: Այդ օրը, մեր Թեմի բոլոր Եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ Տէր Ողորմեայի յատուկ աղօթք, ի հանգիստ զոհերու հոգիներուն:

**REQUIEM FOR PLANE CRASH VICTIMS OFFERED
AT ST. MARY'S CHURCH**

On the morning of Monday, July 20th, 2009, requiem service for the victims of last week's plane crash in Iran was offered at St. Mary's Church in Glendale. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the service, in which clergy members participated.

Among those participating in the requiem service were representatives of the Armenian Society of Los Angeles, members of the "Jan Tavriz" Committee, and over 700 faithful.

During the service the Prelate offered prayed for the repose of the souls of the victims, among them Dr. Levon Davtian, member of the Catholicosate Central Executive. On behalf of the Consul General of Armenia the Honorable Grigor Hovhannisyan, who would be joining the mourners at the ensuing gathering in the church hall, the Prelate expressed his condolences to the families of the victims, praying for the Holy Spirit to bring them comfort and solace as they mourn the tragic loss of their loved ones.

A coffee reception in memory of the victims took place at "Armenak Der Bedrossian" Hall following the requiem, during which the Prelate comforted those who lost family members in the tragedy.

The service took place on Monday since Sunday, July 19th, was one of the five major feasts of the Armenian Church, the Transfiguration of our Lord, thus requiem could not be offered. Instead, special prayers were offered in all Prelacy Churches during Divine Liturgy.